ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 289

10 հունիսի 2025 թվականի N - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԲՈՒՍԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2025 թվականի մարտի 27-ի «Բուսաբուծության աջակցության ծրագիրը հաստատելու մասին» N 356-Լ որոշման 21-րդ կետը,

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում բուսաբուծության աջակցության ծրագրով ընտրանքային մոնիթորինգ իրականացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ՝ համաձայն հավելված N 1-ի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում բուսաբուծության աջակցության ծրագրով ընտրանքային մոնիթորինգ իրականացնելու արդյունքում կազմվող արձանագրության ձևը՝ համաձայն հավելված N 2-ի:

3. Աշխատանքային խմբին՝

ա) տվյալ համայնքի կողմից մոնիթորինգ իրականացնելուց հետո, բայց ոչ ուշ քան բերքահավաքը, ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներկայացուցչի մասնակցությամբ ապահովել ընդգրկված շահառուների առնվազն քսան տոկոսի ընտրանքային մոնիթորինգի իրականացումն, այդ թվում՝ բուսաբուծության աջակցության ու այլ փաստաթղթերի ուսումնասիրություն և արձագրության կազմում:

բ) մոնիթորինգն իրականացնելուց հետո առավելագույնը մեկ ամսվա ընթացքում ամփոփել իրականացված ընտրանքային մոնիթորինգի արդյունքները և ներկայացնել

մարզպետին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն:

Recoverable Signature

X

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. Ղուկասյան**

2025թ. հունիսի 10
ք. Կապան

Հավելված N 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2025թ. հունիսի 10-ի N 289-Լ որոշման

ՑԱՆԿ

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում բուսաբուծության աջակցության ծրագրով ընտրանքային մոնիթորինգ իրականացնելու նպատակով ստեղծված աշխատանքային խմբի

Ն. Ղազարյան - Մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ

Ռ. Կոստանդյան - Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության պետ

Է.Բունիաթյան- Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

Գ.Դավթյան - Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության գլխավոր մասնագետ

Մ.Մարտիրոսյան - Մարզպետի աշխատակազմի գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության վարչության ավագ մասնագետ

Ա. Բակունց - ՀՀ ԷՆ ԳԾԿ ՊՈԱԿ մոնիթորինգիև տեղազննման իրականացման բաժնի գլխավոր մասնագետ (համաձայնությամբ)

Recoverable Signature

X

Signed by: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար **Է. Մարտիրոսյան**

Հավելված N 2
ՀՀ Սյունիքի մարզպետի
2025թ. հունիսի 10-ի N 289-Լ որոշման

Արձանագրություն

ՀՀ կառավարության 27 մարտի 2025 թվականի N 356-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում բուսաբուծության աջակցության ծրագրի՝ ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կողմից իրականացված ընտրանքային մոնիթորինգի

Համայնք՝ _____, Բնակավայր՝ _____

Շահառու՝ _____

Ցանքատարածության մակերեսը՝ _____հա

Ցանքսը կատարված է՝

☐ հավաստագրված սերմացուով

Մոնիթորինգի եզրակացությունը՝ (Համապատասխան վանդակում կատարել V-աձև գրառում)

ԴՐԱԿԱՆ ☐ ԲԱՑԱՍԱԿԱՆ ☐

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Ն. Ղազարյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Ռ. Կոստանդյան

_____ Է. Բունիաթյան

_____ Գ. Դավթյան

_____ Մ. Մարտիրոսյան

_____ Ա.Բակունց

2025-06-11 15:04:36 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի
գլխավոր քարտուղար **Է. Մարտիրոսյան**